ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր Լրացուցիչ Ֆինանսավորում (ԿՆՃՑԲԾ ԼՖ)

Ճանապարհային նշանների մատակարարում և տեղադրում
Մրցույթ թիվ՝ NCB-LRNIP-AF-G/2017-RS
Փոփոխություն #1

Հարգելի Հայտատու
Սույնով ցանկանում ենք տեղեկացնել, որ Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման Լրացուցիչ Ֆինանսավորման (ԿՆՃՑԲԾ ԼՖ) ծրագրի շրջանակներում իրականացվող «Ճանապարհային նշանների մատակարարում և տեղադրում» թիվ NCB-LRNIP-AF-G/2017-RS մրցութային փաստաթղթերում կատարվել է փոփոխություն:
Խնդրում ենք հաշվի առնել ներքոնշյալը Հայտը պատրաստելուց.

1. Մրցութային փաստաթղթերի II Բաժնի («Հայտաթերթ») ՑՀ 22.1, ՑՀ 25.1 (Դ. «Հայտերի ներկայացում և բացում») ենթակետերը շարադրվում են հետևյալ խմբագրությամբ.

ՑՀ 22.1	Մրցույթի մասնակիցները **պետք է** ներկայացնեն իրենց առաջարկներն էլեկտրոնային եղանակով՝ **<u>միայն</u>** էլ-գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով մինչև **<u>2018թ-ի հունվարի 10-ը, ժամը 15:00-ն</u>**: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:
ՑՀ 25.1	Ստացված առաջարկների էլեկտրոնային բացումը տեղի կունենա **<u>2018թ-ի հունվարի 10-ը, ժամը 15:00-ն</u>** էլ-գնումների Armeps համակարգի միջոցով:

2. Մրցութային փաստաթղթերի **VII Բաժնի (Պահանջների ցանկ) 3-րդ կետի (Տեխնիկական Մասնագրեր) 2.1. Նշանների վահանակները** ենթակետը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.

«Բոլոր նշանների վահանակները պետք է համապատասխանեն նախագծին: Նախազգուշացնող, կարգավորող և տեղեկատվության նշանների վահանակները պետք է պատրաստվեն 1.2 մմ հաստության հատուկ ձևով դրոշմահատված պողպատե թիթեղից և եզրերը առնվազն 15 մմ նշանի հետևի կողմ ծալվեն՝ ամբողջ նշանին առանձնահատուկ ամրություն տալու նպատակով: Ստանդարտ նշանները պետք է լինեն 1 ամբողջական կտորից, առանց որևէ եռակցման: Միայն վահանակը կանգնակին ամրացնելու համար նախատեսված ամրակման դետալները կարող են եռակցված լինել վահանակին: Ոչ ստանդարտ նշանները կարող են պատրաստվել 1-ից ավելի կտորներից: Մակերևութը պետք է լինի կրկնակի փոշեներկված՝ (նախնական և արտաքին շերտ)՝ 0.1-0.2մմ ընդհանուր հաստությամբ:

Նման թիթեղները նախքան որպես երթևեկության նշանների վահանակներ օգտագործվելը պետք է յուղազրկվեն, փորագրվեն, չեզոքացվեն և մշակվեն:
<u>Յուրաքանչյուր ճանապարհային նշանի վրա, հետևի կողմում պետք է տեղադրվի ջրակայուն պիտակ՝ արտադրողի անվանումով</u>:»